



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

26 սեպտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Պետրոսյանի
Անդամակցությամբ՝ Ֆ.Թոխյանի
Ա. Թունյանի

Ուսումնասիրելով Անաիդա Աղաջանյանի, Վլադիմիր Աղաջանյանի, Արմեն
Աղաջանյանի և Արմինե Աղաջանյանի անհատական դիմումի ընդունելիության
հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝
Անաիդա Աղաջանյանը, Վլադիմիր Աղաջանյանը, Արմեն Աղաջանյանը և Արմինե
Աղաջանյանը դիմել են ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին,
3-րդ մասերին, 78, 79 և 81-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել «Սնան-

կության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետով սահմանված դրույթը:

կամ

Բացահայտել՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետով սահմանված դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը (սահմանելով՝ Դիմողների նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով վերանայման հնարավորություն)»:

Դիմողները գտնում են, որ վիճարկվող դրույթը միաժամանակ միջամտում և անիրավաչափորեն սահմանափակում է նվիրատուների՝ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքը: Ըստ դիմողների՝ փաստացիորեն, նվիրատուն անհամաչափորեն զրկվում է օրինական՝ ոչ կեղծ պայմանագրի հիման վրա, օրինական ճանապարհով իրեն փոխանցված սեփականությունից: Վերջինս տեղի է ունենում անգամ այն դեպքում, երբ պայմանագրի կնքման պահին ոչ նվիրատուն, ոչ նվիրատուն չէին կարող իմանալ, որ հետագայում նվիրատուն սնանկ է ճանաչվելու: Այսինքն, նվիրատուի և նվիրատուի միջև կնքված գործարքն անվավեր է ճանաչվում անկախ այն հանգամանքից, թե նրանք իրականում կնքել են կեղծ պայմանագիր, թե՛ ոչ: Ուստի անհատույց գործարքի անվավեր ճանաչումը ՀՀ Սահմանադրությամբ չնախատեսված և չարդարացված միջամտություն է նվիրատուների սեփականության իրավունքին:

Քննության առարկա անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ դիմողները պահպանել են ՀՀ սահմանադրական դատարանի դիմելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջները, այն է՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին.
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան.
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում.

- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում.
- դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 և 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «Անախդա Աղաջանյանի, Վլադիմիր Աղաջանյանի, Արմեն Աղաջանյանի և Արմինե Աղաջանյանի դիմումի հիման վրա՝ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝